ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 408. Բացառիկ վերանայման արդյունքով կայացվող դատական ակտերը և դրանց հրապարակմանը հաջորդող վարույթը

1. Բացառիկ վերանայման արդյունքով իրավասու դատարանն ամբողջությամբ կամ մասնակի բեկանում է բողոքարկվող դատական ակտը՝ վարույթը փոխանցելով համապատասխան ստորադաս դատարան կամ դադարեցնելով քրեական հետապնդումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կարճելով վարույթը:

2. Բացառիկ վերանայում իրականացնող դատարանն իրավասու է չբեկանելու բողոքարկվող դատական ակտը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքի 403-րդ հոդվածով նախատեսված հանգամանքներն ըստ էության չէին կարող ազդել վարույթի արդյունքի վրա, բացառությամբ սույն օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի:

3. Բացառիկ վերանայման արդյունքով կայացված դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Վերաքննիչ դատարանի դատական ակտը շահագրգիռ անձի կողմից կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված վճռաբեկության կարգով:

4. Բացառիկ վերանայման արդյունքով կայացված դատական ակտը ողջամիտ ժամկետում ուղարկվում է բողոքը բերած անձին և տվյալ վարույթի մասնավոր մասնակիցներին:

5. Բողոքարկվող դատական ակտը բացառիկ վերանայման կարգով բեկանվելու և վարույթը ստորադաս դատարան փոխանցվելու դեպքում վարույթն իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ բացառիկ վերանայում իրականացրած դատարանի սահմանած ծավալով: